Արձանագրություն N 3

ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/3 ծածկագրով ՀՀ գլխավոր դատախազության մասնաշենքի վերնակառույցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 20 նոյեմբերի 2017թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սարիբեկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մաթևոսյան / գնահատող /
Ն. Մարտիրոսյան / բացող /
Ն. Մանուկյան / բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

Բացակայում էր
հանձնաժողովի անդամ՝ Ա.Քոչարյան /գնահատող/

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանի մասին

(Մ.Սարիբեկյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

- Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Մ.Սարիբեկյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Մ.Սարիբեկյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Մ.Սարիբեկյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Սարիբեկյան

Անդամ՝ ---------- Ս. Մաթևոսյան

---------- Ն. Մարտիրոսյան

---------- Ն. Մանուկյան

Արձանագրությունը կազմեց

հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան